

ՀՏԴ: 929:891.981(479.25)Իսահակյան+891.981

DOI: 10.54503/0135-0536-2025.3-95

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՐԻ ՀԱՄԱՐ Է*

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Իսահակյան, Վարպետ, բազմաթանր, «Աբու-Լալա Մահարի», «Ուստա Կարո», բալլադներ, բանահյուսություն, Հայկական Հարց, Հոբելյան:

Ամփոփում

Ավետիք Իսահակյանը դարակազմիկ երևույթ է Հայ գրականության պատմության մեջ: Նրա ստեղծագործությունը խորապես ուսումնասիրված ու գնահատված է ոչ միայն Հայ գրականագիտական ու գրաքննադատական մտքի, այլև օտարազգի գրականագետների ու գրողների կողմից: Հայ ժողովուրդն այնքան եզակիություն է իմաստություն է տեսել նրա ստեղծագործության մեջ, որ նրան տվել է Վարպետ պատվանունը:

Բոլոր հանճարներին հաստով աստվածային շնորհը նրա մտածողության մեջ դրսևորվել է դեռ մանուկ հասակից, և ուսումնաստենչությունը նրան տարել է եվրոպայի նշանավոր մշակութային կենտրոնները: Տարբեր լեզուներով կարդալով համաշխարհային գրականության գլուխգործոցները՝ Վարպետն էությունով կապված է եղել հայրենիքի, նրա ճակատագրի հետ ու շարունակ մտածել է նրա ապագայի մասին: Արտասահմանում եղած տարիներին շարունակ հետևել է Հայաստանի մշակութային, կրթական, գիտական, քաղաքական կյանքին:

Դեռ շատ տարիներ առաջ, տեսնելով մարդկության տեխնիկական առաջընթացը, ցավով արձանագրել է, թե կգա հոգու սով և մարդկությունը կհեռանա աստվածաշնչային և ազգային ավանդույթներից:

Վարպետի ստեղծագործության բազմաթիվ էջեր գրված են փրկատիպական խորքով ու անսահման մարդասիրությամբ: Նրա գլուխգործոցը՝ «Աբու-Լալա Մահարի» պոեմը, համամարդկային գաղափարներով տոգորված հանճարեղ ստեղծագործություն է: Այլ. Իսահակյանի ողջ ստեղծագործությունն ուղղված է մարդկության մեջ եղած չարիքի դեմ: Գրողը լայնորեն օգտվել է ոչ միայն

* Ներկայացվել է 14. X. 2025 թ., գրախոսվել է 27. X. 2025 թ., ընդունվել է տպագրության 17. XI. 2025 թ.:

© Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

Հայ, այլև օտարազգի ժողովրդական բանահյուսությունից, այսինքն՝ մարդկության դարավոր իմաստությունից:

Իսահակյանն իրավամբ գնահատվել է որպես համաշխարհային գրական մեծություն:

Նախաբան

Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունն առանց չափազանցության XX դարի առաջին կեսի համաշխարհային գրականության լավագույն գրականություններից է:

Ընդունված կարծիք է, որ հանճարեղ գրողները չունեն ազգային, նեղ սահմաններ, նրանք, լինելով խորապես ազգային, համամարդկային են: Իսահակյանի ստեղծագործության ճշգրիտ գնահատականները տվել են շատերը, սակայն դրանց մեջ հանրահայտ է Ալեքսանդր Բլոկի բնորոշումը. «Իսահակյանը առաջնակարգ բանաստեղծ է, թերևս այժմ այդպիսի պայծառ ու անմիջական տաղանդ չկա ողջ եվրոպայում»¹:

Հայ գրականագիտության մեջ Ավ. Իսահակյանի ստեղծագործության վերաբերյալ գրվել են բազմաքանակ մենագրություններ, անհաշվելի քանակի հոդվածներ: Դրանք ոչ միայն հայերեն են, այլև օտար լեզուներով: Գրվել են հուշեր, նկարահանվել վավերագրական ֆիլմեր, նրա փառահեղ արձանը կանգնած է Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնում, տուն-թանգարանները հիանալի մշակութային վայրեր են գրականության և արվեստի սիրահարների համար: Նա յուրօրինակ ձևով մեր կողքին է՝ իր իմաստուն խորհուրդներով, ծով գիտելիքներով, հայրենասիրությամբ ու մարդասիրությամբ:

Իսահակյանի գլուխգործոցը «Աբու-Լալա Մահարի» պոեմը, 1912-ին Փրանսերեն թարգմանությամբ լույս է տեսել Փարիզում՝ Թարգմանչի Ժան Մինասյանի ուշադրավ առաջաբանով, որում ասվում է արաբ բանաստեղծ Աբու-Լալա Մահարու գործերի տարբեր լեզուներով թարգմանված լինելու փաստի մասին²: Իսահակյանագետները կազմել են Վարպետի գլուխգործոցի թարգմանության հետևյալ ցանկը. խոսերեն (1913), գերմաներեն (1914, 1919), ռուսերեն (1916, 1956), անգլերեն (1925, 1958), էսպերանտո (1926), եբրայերեն (1927), ճապոներեն (1928), իսպաներեն (1929), վրացերեն (1931, 1968), արաբերեն (1940), չեխերեն (1946, 1966), ֆրանսերեն (1952, 1955), հունգարերեն (1964), բուլղարերեն (1967), սերբերեն (1967):

1939 թվականին ՀԽՍՀ պետական հրատարակչությունը շքեղ տեսքով հրատարակել է Վարպետի ընտիր երկերը երկու հատորով՝ գրականագետ Խորեն Սարգսյանի առաջաբանով: Այդ առաջաբանում շեշտվում է Իսահակյանի ստեղծագործության վերժամանակյա բնույթը. «Իսահակյանին ենթակա է թե ժամանակը և թե տարածությունը: Ոչ ոք Իսահակյանի պես խորը չի ըմբռնել անապատի անեղրությունը ու նրա ներշնչած արևային անուրջները: Քչերն են նրա պես խորը թափանցել Արևելքի փիլիսոփայության ներհուն ծալքերը, նրան

¹ Հայ նոր գրականության պատմություն. 1979, 341:

² Isaakian. 1952, 8.

Հայտնի են դրախտի գաղտնիքները, նա շոշափելի, ինչպես այսօրը, պատկերացնում է Հայ ժողովրդի նախահայրերին»³:

Կյանքը

Վարպետի կենսագրության մասին շատերն են գրել, այն կարելի է վերականգնել ըստ տարբեր թվականների գրված նամակների: Այն կա Հայկական, ռուսական Հանրագիտարաններում: Խիստ համառոտ, սակայն փաստահարուստ այն ներկայացված է Հայկ Խաչատրյանի կազմած «Գրական տեղեկատուի» մեջ⁴:

Վաստակաշատ իսահակյանագետ, Վարպետի թոռ Ավիկ Իսահակյանը հրատարակել է գրողի գիտական կենսագրությունը՝ նրանում ներկայացնելով բացառիկ հետաքրքիր մանրամասներ: «Բանաստեղծի տոհմագրությունից» առաջին գլխում կա բանաստեղծի հետևյալ խոստովանությունը. «Սիրելագույն Շիրակն ինձ համար տիեզերքի կենտրոնն է եղել, որովհետև այնտեղ է, որ սկսել է բարախել իմ սիրտը»⁵: Մեկ այլ առիթով նա խոստովանել է. «Ես աչքս բացել եմ այնպիսի մի աշխարհում, ուր գուտ Հայացի է, Շիրակը, ուր ամեն անկյունը Հայկական կնիք ունի: Անին ... և շուրջը հոծ, կենդանի Հայություն, երգ, լեզու, պար, իմաստություն. մի երկիր, ուր ժամադրավայրն է եղած Հայկական բոլոր հատվածների. խոյեցու կողքին երգնկացին, մչեցու կողքին կարնեցին, վանեցին, նույնիսկ արաբկիրցին ... »⁶: Այս խոստովանությունը բնական է, որովհետև Հայ Բագրատունիների մայրաքաղաքը՝ տիեզերահռչակ Անին, դեպի իրեն էր ձգում ոչ միայն Մեծ Հայքի, այլև Կիլիկիայի հայերին:

Վարպետը ծնվել է 1875-ի հոկտեմբերի 30-ին Ալեքսանդրապոլ (այժմ Գյումրի) քաղաքում, բազմանդամ, ապահով ընտանիքում:

1828-ին՝ ռուս-պարսկական պատերազմին հետևած ռուս-թուրքական պատերազմից հետո, Բայազետ քաղաքի Հայ բնակչությունը տեղափոխվում է Արևելյան Հայաստան: Տեղափոխվողների թվում էր նաև Իսահակյանի ընտանիքի տոհմագետը՝ Նիկողայոս աղան: Իսահակյանն ունեցել է սիրասուն ծնողներ, որոնց մշտապես հիշել է. «Ահա՛ Հայրս և մայրս: Հայրս լուրջ դեմքով, բարի և պատկառելի, մայրս սրբուհու պատկերով, անուշ, վշտոտ և գլխառատ»⁷: Բանաստեղծը եղել է ընտանիքի փոքր զավակը ու անսահման կապված էր մոր՝ Ալմաստի հետ, որին անվանում էր Ապլա:

Մանուկ հասակից Ավետիքն աչքի է ընկնում բացառիկ ընդունակություններով ու դեպի գիրքն ունեցած պաշտամունքով: Ծնողները, գիտակցելով իրենց որդու արտասովոր ընդունակությունները, նրան ուղարկում են Ղաչաղ գյուղի Հառիճի վանքի դպրոցը, որը հովանավորվում էր Իսահակյանի ընտանիքի կողմից: Անվանի բանասեր Կարապետ Կոստանյանցը, որն առաջինն է 1910-ին Ալեքսանդրապոլում հրատարակել Գրիգոր Մագիստրոսի (990–1058 թթ.) մեծ-

³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1939, 8:

⁴ Խ ա չ ա տ ռ յ ա ն. 1986, 208–212:

⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 9:

⁶ Հայ նոր գրականության պատմություն. 1979, 341:

⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 18:

արժեք թղթերը, գիրք ունի նաև Հառիճի վանքի մասին: Նա Վարպետի մորաքրոջ որդին էր⁸: Իսահակյանի մանկությունն անցել է նաև Լազարապատ գյուղում, որտեղ ընտանիքն ուներ տնտեսություն, ջրաղաց, սեփական տուն:

Տասներկու տարեկանից Իսահակյանը գրում է բանաստեղծություններ: 1888-ին է գրված «Նվեր Րաֆֆու հիշատակին» քերթվածը, որում նա սգում է հայրենանվեր գրողի մահը՝ քաջ գիտակցելով նրա արժեքը հայ գրականության ու հայ ազգի համար:

Հայտնի՛ր, ով տաղանդ, գրիչ առ ձեռքդ,
Գրե՛, գրողմե՛, գովե՛ Հայաստան,
Հարգե՛ հայ լեզուդ, սիրե՛ հայ ազգդ,
Որ փառք ժառանգես Մեսրոպի նման⁹:

1889–1892 թթ. Իսահակյանը սովորել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, որտեղ նրան դասավանդել են Կ. Կոստանյանցը, Հ. Հովհաննիսյանը, Ս. Լիսիցյանը և ուրիշներ:

1892-ի տարեվերջին «Տարագ» ամսագրում տպագրվում է Իսահակյանի առաջին «Ծաղիկ էի նորաբողբոջ» բանաստեղծությունը: Բանաստեղծությունը գրվել է 1892 թ. մարտի 9-ին Գևորգյան ճեմարանում և արժանացել է ուսուցչի՝ Հովհաննես Հովհաննիսյանի գովեստին¹⁰: Նրա բանաստեղծությունները սիրո թեմայով են և արտահայտում են սիրող սրտի տվյալանքները: Դրանք հիշեցնում են հայ ժողովրդական բանահյուսության մեջ շատ տարածված սիրո երգերը:

Սիրուն աստղեր, անուշ հովեր,
Յարքս ո՛ւր է՝ էս գիշեր.
Պարզ երկրների նվազուն աչեր,
Յարիս տեսա՞ք էս գիշեր¹¹:

Գևորգյան ճեմարանը նախադուռ էր եվրոպայում կրթությունը շարունակելու: 1893-ին Իսահակյանը մեկնում է եվրոպա՝ սկզբում Վիեննա, ապա՝ Լայպցիգ, որտեղ ընդունվում է տեղի համալսարան՝ որպես ազատ ունկնդիր:

Արդեն Գևորգյան ճեմարանում ուսանելու տարիներին հայրենիքի ազատագրման գաղափարները դառնում են ապագա մեծ բանաստեղծի էությունը բնորոշ կողմը: Ահա այդ տարիների նրա ազգային դավանանքի դրսևորում մտքերից. «Այն հողմը, որ հիմա հայ նահատակների հառաչանքը կտանի, կգարկե աշխարհի խուլ ականջներին, վաղը ազատագրված Հայաստանի դրոշակը պիտի ծածանե: Ես դրան հավատացած եմ, ինչպես հավատացած եմ իմ գոյությունը, արևի գոյությունը»¹²:

⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 58:

⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 82:

¹⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 387:

¹¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 6:

¹² Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 141:

Հայրենասեր բանաստեղծը 1895-ին վերադարձել է Հայրենիք, 1896-ին ձերբակալվել է ու մեկ տարի մնացել Երևանի բանտում: 1898-ին ցարական իշխանությունները նրան աքսորել են Օդեսա: 1900-ին վերստին մեկնել է Եվրոպա, ապրել ժնևում ու Ցյուրիխում: 1901-ի սեպտեմբերին վերադարձել է Հայրենիք:

1892 թ. աշնանը սկսվում է Իսահակյանի բարեկամությունը Հովհաննես Թումանյանի հետ, որը տևում է մինչև վերջինիս մահը: Ահա Թումանյանից ստացած նրա տպավորությունը. «Առաջին հանդիպումով շատ հաճելի տպավորություն ստացա Թումանյանից: Վարմունքը պարզ էր և ընկերական: Նրա դեմքը ողողված էր, կարծես, մի ներքին լույսով: ... Հագիվ քսան և չորս տարեկան էր, ուրախ, զվարթ, երիտասարդ»¹³: Իսահակյանը դառնում է Թումանյանի հիմնած Կերնատան մշտական անդամը: Այդ առիթով նրա հուշերը եզակի են. «Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր տպավորությունները»¹⁴:

Այդ նույն տարիներին բանաստեղծի համար ազգային-ազատագրական պայքարի խորհրդանիշ է դառնում իրիմյան Հայրիկը: Նա առանձնակի ներկայացնում է այն ջերմ վերաբերմունքը, որ եղել է իրիմյան Հայրիկի ու Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամների միջև¹⁵:

Իր ազատասիրական հայացքների պատճառով Իսահակյանը 1909-ին գտնվել է Մետեխի բանտում: Նույն թվականին ամուսնացել է արցախյան ծագում ունեցող օրիորդ Սոֆիայի հետ, որի հետ ապրել է մինչև կյանքի վերջը: Նրանք ունեցել են մեկ որդի՝ Վիգենը, որը հետագայում գրել է երկու տաղանդավոր հուշագրություն իր հոր Վարպետի և հանճարեղ քանդակագործ ու նկարիչ Երվանդ Քոչարի մասին: Այդ հուշագրությունները բնատուրենք էին և ունեն ճանաչողական մեծ արժեք, և իրենց բովանդակությամբ եզակի փաստեր են հաղորդում Վարպետի ու Երվանդ Քոչարի կենսագրության մասին¹⁶:

Հերթական ձերբակալումից խուսափելու նպատակով Վարպետը կոռն ու նորածին որդու հետ 1911-ին մեկնում է Կ. Պոլիս: Նա շատ տխուր ձևով է պատկերել քաղաքի հայ համայնքի կյանքը:

Բնականաբար, ընտանիքի կարիքները հոգալու համար աշխատանք է փնտրում: Տրապիզոնից հրավեր է ստանում հայկական դպրոցում տեսուչ աշխատելու, սակայն հրաժարվում է: Եվրոպայի զարգացած քաղաքները տեսնելուց հետո Իսահակյանը չէր կարող հարմարվել Թուրքիայի հոգևոր ու մշակութային միջավայրին: Նա գրում է. «Իմ գործը չէ տեսուչ լինել ... ես գրող եմ և գրող էլ կմնամ, թեկուզ սոված մեռնեմ»¹⁷:

Վարպետին հաջողվում է անցնել Վիեննա, ապա հաստատվել ժնևում: Այդ տարիներին նա ապրել է և՛ ժնևում, և՛ Բեռլինում: 1921–1926 թթ. բնակվել է Վենետիկում, որտեղ և հանդիպել է Եվրոպայի նշանավոր մշակութային կենտրոնները տեսնելու մեկնած Եղիշե Չարենցին:

1926-ին Իսահակյանը գալիս է Երևան նախապես ընտանիքը փոխադրելով Փարիզ: Նա Հայաստանում մնում է չուրջ չորս տարի՝ չարունակական նամակագրություն պահպանելով Փարիզում գտնվող ընտանիքի հետ: Կոռն ուղղված նամակներից մեկում հայտնում է, որ նորից գտել է իր սիրելի ընկերներին

¹³ Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2009, 7:

¹⁴ Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2009, 11:

¹⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 197:

¹⁶ Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, Վ. Ի ս ա հ ա կ յ ա ն. 2006:

¹⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 30:

Դերենիկ Դեմիրճյանին, Գարեգին Լևոնյանին, Սիսակ Տեր-Սիմոնյանին, որն իր հետ երիտասարդ տարիներին Օդեսայում եղել է աքսորում: Հանդիպել է նաև Եղիշե Չարենցին, հայտնում է, որ կյանքը Երևանում շատ աշխույժ է, որ իր համար չանհանգստանան, ոչնչի կարիք չունի ու ապահով վիճակում է¹⁸:

1930-ին Իսահակյանը մեկնում է Փարիզ ու 1936-ի դեկտեմբերին ընդմիջադեպաբար դադարում է հայրենիք: Այստեղ Վարպետը մշտապես եղել է սիրված ու գնահատված: 1946-ին ընտրվել է Խորհրդային Հայաստանի գրողների միության նախագահ՝ այդ պատվավոր պաշտոնը վարելով մինչև իր կյանքի ավարտը՝ 1957 թ. հոկտեմբերի 17-ը: Վարպետը երկու անգամ պարգևատրվել է Լենինի շքանշանով (1945, 1955): Ընտրվել է ՀՍՍՀ II, III, IV գումարումների Գերագույն խորհրդի պատգամավոր: Նրա անունով Երևանում ու Գյումրիում կոչվել են փողոցներ, ուսումնական հաստատություններ: Ցարդ ՀՀ գրողների միությունը լավագույն բանաստեղծներին Վարպետի անունով շնորհում է ամենամյա մրցանակ:

... Քանի որ իմ դպրոցական տարիներին Վարպետը կենդանի էր, ապա հուշեր ունեմ կապված ազգային հանճարի հետ: Իսահակյանին կարելի էր տեսնել Երևանի կենտրոնի փողոցներում՝ շրջապատված մշտական երկրպագուներով: Նա երկու անգամ հրավիրվել է մեր դպրոց՝ Երևանի Ստեփան Շահումյանի անվան թիվ 1 դպրոցը, և հանդիպել աշակերտների և ուսուցիչների հետ:

1955-ի աշնանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի ակադեմիական թատրոնում նշվեց Վարպետի ծննդյան 80-ամյա հոբելյանը, և ես եղել եմ այն դպրոցականների թվում, որոնք օպերայի բեմից ողջունել են նրան: Անմոռանալի հուշեր կան՝ կապված Վարպետի թաղման հետ: Ես ու մեր դասարանից մի աղջիկ Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահ տարանք մեր դպրոցի պատկը և հետո այդ պատկով շարժվեցինք մինչև Կոմիտասի անվան պանթեոն: Թվում էր, թե ողջ Հայաստանը եկել էր թաղմանը, այնքան հոծ էր բազմությունը և այնքան ծանր էր բաժանման ցավը:

Իմ գիտական ղեկավար Ասատուր Մնացականյանը՝ նշանավոր միջնադարագետը, 1940-ից Հայաստանի գրողների միության անդամ էր և ուներ Իսահակյանի պաշտամունք: Այդ պաշտամունքը կար ծնողներիս և իմ հայ գրականություն ուսուցչի մոտ, որի անուն-ազգանունն էր Տելեմակ Մովսիսյան: Նա երբեմն հանդիպում էր Վարպետի հետ և պատմեց հետևյալ դեպքը: Փողոցով քայլելիս Վարպետը հանկարծ կռանում է և ինչ-որ քար տեղաշարժում: Երբ ուսուցիչս հարցնում է, թե ինչու է շարժում քարը, նա ասում է, թե քարի տակից ծիլ է դուրս գալիս, և քարը նրան նեղում է: Իսկ Ա. Մնացականյանը չեղտում էր, թե Վարպետը եղել է առատաձեռն, հյուրասեր մարդ: Նա նույնիսկ ներկա Բաղրամյան փողոցի թիվ 3 հասցեում գտնվող Գրողների միության շենքի կառուցումն արագացնելու համար տրամադրել է իր անձնական միջոցներին:

Երբ ինձ պատվիրեցին մենագրություն պատրաստել սայաթնովագետ, հնագետ, պատմաբան Մորուս Հասրաթյանի մասին, բնականաբար, կարդացի բազմաթիվ նյութեր, որոնցից մեկը կապված էր Վարպետի հետ, և Հասրաթյանը այն գրել էր հետագա սերունդներին այդ փաստը թողնելու համար: Այդ առիթով նա հիշում է մի ուշագրավ դեպք, որը վկայում է Իսահակյանի եզակի գիտական

¹⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 305:

բարեխղճության մասին: Իսահակյանը Հասարակականի հետ փոփոխում երկար խոսելուց հետո նրան հրավիրում է տուն՝ ճաշելու: Հետո ասում է, որ նախ մտնեն Հանրային գրադարան ու այնտեղ պահանջում է միջատներին վերաբերող մի մեծ հատոր. «Եվ երբ տուն գնացինք, նրա սեղանի վրա դրված էր աստղաբաշխական մի սովոր հատոր և ոչ գրականության վերաբերյալ հատոր, այդպիսին էր անմահ Վարպետը: Դրա համար էլ ամեն գրածը ոչ միայն ճիշտ է, ոչ միայն սիրտ է, ոչ միայն միտք է, այլև աղը տեղը, համով ու հոտով է»¹⁹:

Առաջին գիրքը և բանաստեղծական ժառանգությունը

Իսահակյանի առաջին գիրքը լույս է տեսել Ալեքսանդրապոլում «Երգեր ու վերքեր» խորագրով: «Հայ նոր գրականության պատմության» ակադեմիական հինգերորդ հատորի 348-րդ էջում կա գրքի անվանաթերթի ֆոտոնկարը, որի վրա նշված է 1897 թվականը, սակայն բազմաթիվ դասագրքերում ու մենագրություններում նշված է, թե բանաստեղծի անդրանիկ ժողովածուն լույս է տեսել 1898-ին: Սա տրամաբանական է, որովհետև 1898-ին գրված որոշ բանաստեղծություններ հետագայում զետեղվել են «Երգեր ու վերքեր» ժողովածուում²⁰:

Ցաված սեր, կարոտ, բաժանում, մայրական սեր, բանտ՝ սրանք են առաջին ժողովածուի թեմաները: Մի իրողություն որոշակի է. Հայ բազմադարյան քնարերգության մեջ հնչում է բոլորովին նոր, ինքնատիպ, սրտալի և իմաստուն ձայն: Գրականագետ Ալբերտ Մուշեղյանը դիպուկ նկատել է. «Ժողովրդական մոտիվներն Իսահակյանի մոտ դառնում են հատկապես անձնական հույզերի արտահայտման միջոց: Քիչ բացառությամբ, այդ ոգով է ստեղծված նրա ողջ սիրային քնարերգությունը՝ գրական ստեղծագործության առաջին տասնամյակի ընթացքում (1888–1898 թթ.): Մի՞թե ժողովրդական ձևով չեն հնչում սիրո կորստի հետևյալ սողերը.

Երկինք-գետինք գլխուս միման,
Անտուն-անտեր կուլամ ես,
Յարիս տարան-ջանիս տարան
Հոնգո՛ւր-հոնգո՛ւր կուլամ ես ... »²¹

Առաջին ժողովածուի բանաստեղծությունները գրվել են աշխարհագրական ամենատարբեր վայրերում՝ Արգինա, Պրազա, Լայպցիգ, Գալիցիա, Վիեննա, Անի և այլն:

Հետագայում որոշ փոփոխություններից հետո, «Կուռնկները շարան-շարան» սկսվածքով բանաստեղծությունը 1908-ին դրվում է «Երգեր ու վերքեր» ժողովածուում: Այն գրվել է 1897-ին ու արտահայտում է սիրասուն մոր տաղնապն ու սպասումը՝ որդուն բանտից ազատ տեսնելու ցանկությամբ: Ժողովրդական բանահյուսության ոգով մայրը դիմում է կուռնկին և ասում.

¹⁹ Դ ո լ ո լ խ ա ն յ ա ն. 2022, 71:

²⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 399:

²¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 35:

Գարունն եկավ, — արևերես
 Ելան ծիլ ու ծաղիկներ.
 Ա՛խ, յարաբ երբ ազիզ բալես
 Կեղնի բանտեն, կռունկներ ...²²

*Բանաստեղծը քնարական գործեր գրել է մինչև 1957 թվականը: Ժամանակի ընթացքում նրա թեմատիկան հարստանում է, և շեշտվում է մտածողության փիլիսոփայական կողմը: Սիրո երգերն այնքան սրտագին էին, որ դառնում էին սիրված երգեր, հնչում բեմերից, հավաքներից կամ նեղ, անձնական միայնութ-
 յան պահերին.*

Սև աչերեն շատ վախեցիր, —
 Էն մութ, անծեր գիշեր է,
 Մութըն ա՛հ է, չարքեր շատ կան, —
 Սև աչերը մի՛ սիրե²³:

Հետևելով Խաչատուր Աբովյանին՝ Վարպետը գրում է նաև բայաթիներ.

Ա՛խ, վաթան ջան, մնալով,
 Պանդուխտ հողում մնալով,
 Զիվան կյանքս մաշեցի,
 Քեզնից հեռո՛ւ մնալով²⁴:

Հար նման բանահյուսական պանդխտության երգերին նա գրում է.

Ձմեռն անցավ, եկավ գարուն,
 Հալավ բանձրիկ սարերու ձուն,
 Ճամփա բացավ դարիբներուն:
 Իմ դարիբեն խաբար չի գա
 Աչքս ճամփին՝ դադար չըկա²⁵:

*Ավելի ուշ շրջանի բանաստեղծություններում ժողովրդական մոտիվները փոխվում են մտավորական տղամարդու նրբագույն ապրումների, որոնք ըն-
 թերցողի սրտում ու մտավոր աշխարհում մնում են անմոռաց.*

Քո՛ւյր իմ նազելի, նայիր քո դիմաց՝
 Վիրավոր, ավեր սիրտս եմ բացել,
 Ա՛խ, նվիրական ինձ քո գիրկը բաց
 Եվ գուրգուրիր ինձ, ես շատ եմ լացել ...²⁶

²² Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 62:

²³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 77:

²⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 127:

²⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 150:

²⁶ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 203:

Կյանքի անարդարությունները, սոցիալական խիստ անհավասարությունները, մարդ արարածի անկատար լինելը, հայրենիքի ճակատագիրը յուրօրինակ դրսևորումներ ունեն բանաստեղծի քերթվածներում: Եթե խեղճ աղքատը դառը դատում է, բայց նստում է դատարկ, ապա ո՞րն է արդարությունը: XIII դարում Վերածննդի մտածողությանը հատուկ ֆրիկյան այս հարցադրումները դառնում են Վարպետի քնարի հնչուն լարերից:

Հիացմունքի արժանի կատարյալ հանճարեղ մտքեր ենք կարդում «Կտակ» քերթվածում: Ապագայի մանկիկին բանաստեղծը բացատրում է, որ մարդը պետք է հենվի միայն իր անձի վրա, լինի խիզախ ու անկոտրում, տանի իրական կյանքի դժվարությունները, սթափ խելքով մտածի ու մարդկանց նկատմամբ երբեք չլքի չարությունը, այլ միշտ լավություն անի, իսկ վերջում էլ ամենախիստ զգուշացումը.

Լսի՛ր, տղաս, ինձ կթաղես անհայտ մի տեղ աննշան,
Որ չիմանան, մարդիկ չգան՝ չիրմիս քարը գողանան²⁷:

1926-ին է գրվել «Անի» հրաչք բանաստեղծությունը: Անին մշտական ցավն էր Վարպետի, և նա հավատում էր պատմական արդարությանը.

Դո՛ւ, հին դրոշակ, դո՛ւ, բազին փառքի,
Հենվել եմ նորից քո անմահ սյունին.
Եվ սպասում եմ, և դարեր ոտքի
Քո իրավաբեր շեփորիդ ձայնին ...²⁸

1939-ին է գրվել «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը՝ նվիրված «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի հազարամյակին: Ընթերցողի աչքի առաջ կանգնում է Հայաստանի դարավոր պատմությունը՝ գրված կրթված, նվիրյալ հոգևոր հայրերի ձեռքով, նաև երգված աշխարհասեր ու կենսասեր գուսանների հերոսական ապքերում: Պատմիչները սպասում էին խուլ Աստծու դատաստանին, իսկ գուսանները փառաբանում էին հայրենիքի սիրո համար բարձրացած թուր-Կայծակին²⁹:

1941 թ. հունիսի 26-ին էսենտուկիում է գրվել «Ռազմակոչ» բանաստեղծությունը, որում Վարպետը խրոխտ ձայնով դեպի հերոսացման է կոչում իր երկրի զավակներին՝ քաջ գիտակցելով, որ Հայաստանի դարավոր թշնամին՝ թուրքիան, ֆաշիստական Գերմանիայի դաշնակիցն է.

Դեպի ուղամի դաշտ, դեպ հերոսացում,
Դեպի բարձունքը մեծ Հաղթանակի³⁰:

²⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 291:

²⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 323:

²⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 348:

³⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 358:

1943-ին, երբ արդեն երևում էր Հայրենական մեծ պատերազմի Հաղթական ելքը, Իսահակյանը մի քանի բանաստեղծություն է ձոնում Դավիթ Բեկին ու Սյունիքի ազատագրման համար պայքարած հերոսներին:

Մեծ ոգևորությամբ երկար տարիներ Հայաստանի բեմերից հնչում էր Վարպետի՝ 1945-ի մայիսի 9-ի առիթով գրված «Մեծ Հաղթանակի օրը» բանաստեղծությունը, որում փառաբանվում են Հաղթանակով տուն դարձած հերոսները և հանուն Հայրենյաց սուրբ նահատակները:

Մեր սուրբ փառքով դրեցինք պատյան,
Մեծ Հաղթանակի օրն է ցնծալից.
Պարտվեց մահաշունչ ոսոխը դաժան,
Երգեր են հորդում զվարթ սրտերից³¹:

Որպես իր բանաստեղծական խոսքի վերջերգ՝ 1957 թվականի օգոստոսին նա գրել է.

Մարդու տենչանքն է՝ հավիտյան ապրել
Եվ լինել Աստված տիեզերաշեն,
Ամենակարող, ամենահզոր,
Եվ ամենազեւ³²:

Հիշենք, թե Հին Կտակարանի «Ծննդոց» գրքում ինչպես են Աստծու բանակապետությամբ օժտված մարդիկ դառնում մահկանացու և ճանաչում բարին ու չարը. «Աստված դուրս հանեց Ադամին, բնակեցրեց դրախտի դիմաց և հրամայեց քերովքներին ու բոցեղեն սրին շուրջանակի հսկել դեպի կենաց ծառը տանող ճանապարհները»³³: Վարպետը քաջ գիտակցում էր, որ ինքն էլ իր մեծ նախորդների՝ Սողոմոն Իմաստունի, Գրիգոր Նարեկացու, Լև Տոլստոյի և աշխարհի մյուս հանճարների նման չգիտի տիեզերքի գաղտնիքներն ու ամենազեւ է: Իսահակյանն իր մասին գրել է. «Եղել եմ տղատղական, նիցչեական Գերմանիայում, ուսանող ժամանակս՝ սոցիալ-դեմոկրատ: Հուսահատված՝ դարձել եմ անիշխանական, պեսիմիստ: Տարվել եմ Բուդդայով: Ոգևորվել եմ հայկական մարտական ազգայնությամբ, դաշնակցական ո՛չ երկրորդական գործիչ՝ աշխատել եմ անձնավիրաբար, բանտեր եմ նստել, աքսորվել, փախել Հայրենիքից»³⁴: Սա հանճարին հատուկ անկեղծ ինքնախոստովանություն է ի լուր ամենքի:

Վարպետի բանաստեղծական խոսքը նոր փայլատակումներ ունեցավ նրա բայլաղներում, լեզենդներում, առակներում, հիասքանչ պոեմներում: Դրանցում վերստին հաստատվեց բանաստեղծի կապը հայ և օտար բանահյուսական նյութերի հետ:

Մոր նկատմամբ ունեցած անսահման սերը, երկար տարիներ նրանից հեռու, օտար ափերում ապրելը, ծնեց եզակի ջերմությամբ շնչող մայրերգություն:

³¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 372:

³² Ի ս ա հ ա կ յ ա ն. 1973, 382:

³³ Ծննդոց. 3, 24:

³⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 246:

«Պանդուխտ որդին», «Մայրը», «Մոր սիրտը» գործերում ժողովրդական բանահյուսության ոգով պատկերված է մոր դեպի զավակն ունեցած սիրո անսահմանությունը: «Մոր սիրտը» լեգենդն առավել հասկանալի է դառնում, երբ ծանոթանում ենք Գրիգոր Նարեկացու «Երգ երգոցի» մեկնությունը: Նարեկացին բացատրում է, թե ինչու Սողոմոնը Հիսուսի և եկեղեցու սերը միմյանց նկատմամբ ներկայացրեց հարսի և փեսայի փոխադարձ սիրո օրինակով. «Արդ, չի՞ք յերկրի պատուականագրոյն եւ առաւել քան զսէր առն եւ կնոջ»³⁵: Նաեւ ավելացնում է, թե իր օրերում էլ տղամարդիկ կատարում են իրենց կանանց չար կամքը, գիտակցելով, որ չարիք են գործում, սակայն սիրում են իրենց կանանց: Ահա այդ կերպ միամորիկ տղան իր սիրած աղջկա դաժան պահանջով մորը սպանում է ու սիրտը տանում աղջկան: Սիրտը տանելիս ոտքը սահում է, ու տղան ընկնում է:

Եվ սիրտը մոր ասավ տխուր,
Լացակումած.
— Վայ, խեղճ տղաս,
Ոչ մի տեղդ չըցալաց ...³⁶

Նույն ձևով 1907-ին գրած «Մայրը» Շիրակի ավանդավեպը ներկայացնում է ծեր մոր նկատմամբ հարսի ծայրահեղ ատելությունը, որի պատճառով տղան պարկի մեջ դնում է մորը և տանում անտառ գայլերին կեր: Եվ լավում է լքված մոր ձայնը.

— Երթաա բարով, Աստված քեզ հետ,
Ոտքըդ քարի թող չըգա.
Տըղաս, վերցրու պարկը քեզ հետ,
Պարկը տանը պետք կըգա³⁷:

«Մայրը» ավանդավեպի արձակ տարբերակը Վարպետը ներկայացրել է «Ուստա Կարո» վեպի մեջ³⁸:

1902-ին է գրված «Պանդուխտ որդին», որում սրտաշարժ ձևով պատկերված է, թե ինչպես աղքատ ու մոռացված պանդուխտին չեն ճանաչում ո՛չ սիրած աղջիկը, ո՛չ մտերիմ ընկերը, միայն մայրն է ճանաչում օտարական ներկայացած իր որդուն.

Ահա, մերի՛կ ջան ... վզովս ընկալ, սրբտին գրկեց ու լացեց, —
Ահա, բալա՛ ջան, դարիբ բալա՛, էդ դո՛ւն ես ...³⁹

Իսահակյանը մշակել է նաև այլ ժողովուրդների բանահյուսական ստեղծագործություններ: Նա հատուկ սեր ուներ հայդուկային շարժման նկատմամբ և հիացած էր սերբերի ազատագրական կռիվներով ուղղված թուրք նվաճողների դեմ: Սերբիայի դահիճ Աբդուլլահ փաշան երկրի մայրաքաղաքում՝ Բելգրադում, ի նշան իր հաղթանակի, ճոխ խնջույք է կազմակերպում ու կանչում է ծեր

³⁵ Ն ա ր ե կ ա ց ի. 2011, 766:

³⁶ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 190:

³⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 171:

³⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2006, 352:

³⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 165:

գուայար Միրկոյին՝ գովերգելու իր փառքը: Դրա վարձը լինելու էր գուայարի գերի ընկած որդիների կյանքը: Հայրենիքի սերն ու ծնողական սերը փոթորկում են Միրկոյի հոգին, և հաղթում է հայրենիքի սերը:

– Ով սրիկաներ, ճիվաղ, տմաղի,
Մորթեցե՛ք, լափե՛ք ալել, առաւել,
Սակայն իմացե՛ք,
Որ ժողովրդի քնարը երբեք
Զի կարող ստել ...⁴⁰

Բալլադների ու լեգենդների մեջ բանաստեղծը գետեղել է հրեական առասպել ու ավանդակեպ, միջնադարյան քրիստոնեական եկեղեցու կողմից սրբացված Ավգուստինոսի տեսիլքը, քրդական սիրավեպ «Սիրահար Նադոն», անտիկ աշխարհի մեծ մտածող Սոկրատեսի մահապատժից առաջ երաժշտության գաղտնիքներն իմանալը: «Սոկրատեսը» նա գրել է Աթենքում, գուցե այցելել է այն վայրը, ուր մեծ փիլիսոփան բանտարկված էր, որովհետև այդ վայրը համարվում է Աթենքի տեսարժան վայրերից: Մշակված ներկայացրել է նաև համաշխարհային հռչակ ունեցող արաբական «Լեյլի և Մեջնում» սիրավեպի հայացված տարբերակը: Վերջինս գետեղել է նաև «Ուստա Կարո» վեպում⁴¹:

«Լեյլի և Մեջնում» սիրավեպին որոշ խաղերում անդրադարձ ունի նաև անգուգական Սայաթ-Նովան:

Յիս քու դիմեթըն չիմ գիդի՝
Զափահիր քարի նման իս,
Տեսնողին Մեջնում կու չինիս՝
Լեյլու դիդարի նրման իս⁴²:
Մեջնումի պես սարն իմ նընգի,
Լեյլումեն խաբար չունիմ⁴³:

Հայրենասիրության չմոռացվող սխրանք կա «Հայրենի հողը» լեգենդում, որը քաղել է հայրենի Շիրակի բանահյուսությունից: Չնայած անտեսված լինելու կեղեքիչ վիրավորանքին՝ խիզախ զորավարը հայրենի հողի կանչով, շինականի ու գուսանի խնդրանքով վերադառնում է հայրենիք ու փրկում այն նվաճողներից:

Համաշխարհային առաջադեմ գրականությունը V դարի քոչվոր Աթիլլային համարում է աստվածային պատիժ: Աթիլլան՝ հոների առաջնորդը, հսկայական տարածքներ է զավթում Հռոմեական կայսրությունից և հասնում մինչև Փարիզ:

Արդեն ծփում էր արյան մեջ
Հեզ Եվրոպան մինչ Գալիա,
Որ Աթիլլան վարեց սրով
Ազգեր, ցեղեր, իրարու դեմ⁴⁴:

⁴⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 224:

⁴¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2008, 270–272:

⁴² Ս ա յ ա թ-Ն ո վ ա. 1963, 23:

⁴³ Ս ա յ ա թ-Ն ո վ ա. 1963, 34:

⁴⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 210–211:

1937 թ. «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրված հոդվածում Իսահակյանը խոստովանում է, թե ինչն է մարդկային կյանքում պատանի հասակից իրեն մտատանջել. «... մտալիկ է աշխարհի մեջ գոյություն ունեցող չարիքը, մարդկությանը տառապեցնող չար իրերը-աղքատությունը, չահագործում, ոճիրներ: Ինձ տանջել է հայ աշխատավոր ժողովրդի դառն վիճակը սուլթանի և ցարի դաժան լուծերի տակ և այդ չարիքները վերացնելու գործը, փրկություն միջոցները»⁴⁵:

Վարպետը լայնորեն օգտվել է ժողովրդական բանահյուսությունից նաև իր մշակած առակներում: Նրա ստեղծագործության ժողովրդական ակունքների մասին արժեքավոր հետազոտություն ունի ականավոր բանագետ Արամ Ղանալանյանը⁴⁶:

Իսահակյանը առակները գրելիս օգտվել է Աստվածաշնչից, Լոխմանի զրույցներից, արևելյան ժողովուրդների առակներից, Վարդան Այգեկցուն վերագրվող «Աղվեսագրքից», հայ ժողովրդական բանահյուսությունից, Հայսմա-վուրքից:

Ատելով մարդկային կյանքում այնքան մեծ չափերի հասնող կեղծիքը, հատկապես անաղնիվ ընկերությունը՝ Վարպետը 1927-ին գրել է «Արջն ու օձը» առակը: Արջն ու օձը ընկերանում են խոստանալով անխախտ ու նվիրված ընկերություն:

Սակայն օձի սողքը բեկբեկ
Դուր չէր գալիս արջին երբեք⁴⁷:

Արջը ջախջախում է օձի գլուխը, նետում ջուրը և հայտարարում.

– Այ, ընկերը հսկես շիտակ
Պիտի լինի,
Դե՛հ, շիփ-շիտակ գընա հիմի⁴⁸:

1932-ին է գրված «Կաքավն ու աղվեսը» առակը, որն ունի հայկական, բանահյուսական հիմք: Աղվեսը բռնում է կաքավին, որ ուտի, սակայն կաքավը հնարամտորեն աղվեսին խորհուրդ է տալիս ուտելուց առաջ Աստծուն փառք տա: Մինչ աղվեսը Աստծուն փառք էր տալիս, կաքավը թռչում է և ազատվում: Առակի բարոյախոսական եզրահանգումն է.

Եվ աշխարհիս մեջ թող անիծվի նա,
Ով դեռ չկերած՝ Աստծուն փառք կտա⁴⁹:

1924-ին Վենետիկում է գրվել «Կյանքից թանկ բանը» առակը: Այն փրկստ-փայական խոր իմաստ ունի: Վերավոր աղավնին ընկած աղբյուրի եզրին արնաքամ է լինում: Աղբյուրի ոգին՝ պարիկը, աղավնուց պահանջում է ինչ-որ

⁴⁵ Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1955, 49:

⁴⁶ Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1955:

⁴⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 241:

⁴⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 242:

⁴⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 244:

Թանկ բան, ու նա աղավաղվում է կյանք կտա ... պարիկը պահանջում է աղավաղվող թևերը՝ կյանքի դիմաց: Ազատատենչ աղավաղվող հրաժարվում է՝ գերադասելով մահը: Կարևորը առակի բարոյախոսական եզրահանգումն է:

— Թուխ, սիրելիս, ազատ ու վայրի,
Թուխ ու ասա ստրուկ աշխարհին,
Թե ինչն է թանկը կյանքից ավելի ...
Ասաց ջրերի լուսեղեն ոգին⁵⁰:

«Սատանան ու իր աղջիկները» հայ միջնադարյան առակում պատմվում է սատանայի չորս աղջիկների ամուսնություն մասին: Երեք աղջկա անունն էր Գոռոզ, և նա դառնում է իշխանավորի կին, երկրորդ աղջկա անունն էր Ագահ, ու վերջինս ամուսնանում է վաճառականի հետ, երրորդի անունը Նախանձ էր, և նա ամուսնանում է արվեստագետի հետ: Հետաքրքիր է չորրորդ աղջկա ճակատագիրը:

Իսկ գեղեցկուհուն «Սեր» կոչեց հայրը՝
Եվ տվեց նրան ամբողջ աշխարհին⁵¹:

Իսահակյանը բազմաթանր գրող է. ժանրային տարբերություններ ունի թե պոեզիայում և թե արձակում:

Բանաստեղծի առաջին պոեմը գրվել է 1895–1917 թվականների ընթացքում և կոչվել է «Ալագյազի մանիներ»: Մանի է կոչել արևելյան սրտառուչ երգերին հետևելով: Պոեմը ծավալուն է՝ բաղկացած առանձին շարքերից, որոնց մեջ ժողովրդական բանահյուսության ոգով, բառ ու բանով, ազգագրական ավանդույթներով փառաբանվում են հայրենի եզերքը՝ սարեր, ջրեր, աղջիկների երգեր, ծաղիկներ, զեփյուռ, Վարդավառի տոն, աշուղի երգեր, ջերմ սիրերգեր: Բոլոր երգերը շաղկապվում են պաշտելի Արագածի ու չքնաղ երիտասարդ աղջիկ Զարոյի հետ: Վալերի Բրյուսովը դիպուկ նկատել է, որ Եվրոպայում կրթվող Իսահակյանը իր որոշ ստեղծագործություններով այնքան է մոտենում ժողովրդական բանահյուսությանը, որ թվում է դրանք անհայտ, անանուն հեղինակների գործեր են⁵²: Զարոյի նկատմամբ ունեցած ապրումները իրենց մեջ արտացոլում են պատանեկան սիրո մաքրությունը, կենսասիրությունը, հեքիաթին հատուկ երազային հնարավորությունները:

Ուսիս վրա գլուխն հենած
Զարոս անուշ կըքնի.
Ու հեքիաթն էլ կիսատ մնաց, —
Սիրու հեքիաթը վերջ չունի ...⁵³

⁵⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 240:

⁵¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 265:

⁵² «Поэзия Армении». 1987, 79–80.

⁵³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 33:

Վարպետի բոլոր պոեմները մանրամասն մեկնաբանված են շատերից, հատկապես Ավիկ Իսահակյանի կողմից⁵⁴:

Մեծանուն բանաստեղծի գլուխգործոցը «Աբու-Լալա Մահարի» պոեմն է, որի նախնական օրինակը «Իմ քարավանը» խորագրով լույս է տեսել 1906-ին⁵⁵: Պոեմը ուռևերեն է թարգմանել Վ. Բյուլսովը՝ թարգմանություն մեջ պահպանելով բնագրի որոշ արաբերեն բառեր՝ Иблис, Дженаат և այլն: Նա գրում է. «Աբու-Լալա Մահարին պատմական դեմք է, իրոք արաբ բանաստեղծ, 973–1058 թվականներին ապրած Բաղդադում, Իհարկե, հեղինակը արաբ բանաստեղծի դիմակի տակ պատկերել է ինքն իրեն և իր ապրումները ...»⁵⁶:

Արաբ բանաստեղծի մասին առավել մանրամասնություններ հաղորդում է Փրանսերեն թարգմանություն հեղինակ Ժան Մինասյանը: Արաբ բանաստեղծը ծնվել է Հալեպի մոտ և չորս տարեկանում ծաղիկ հիվանդությունից կուրացել է: Նրա հայրը մեծ խնամք է տարել որդու կրթության խնդիրներում և տեղափոխել է Բաղդադ: Ժ. Մինասյանն իրավացիորեն նկատել է, թե որքան դժվար է Փրանսերենի թարգմանել Իսահակյանի գլուխգործոցը, որպեսզի այն ունենա նույն հմայքը, ինչ որ Հայերենը⁵⁷: Նա մեջբերում է կատարում մեծագույն մարդասեր Վիկտոր Հյուգոյից, որը երազում էր աշխարհը տեսնել լուսավորված ու չարիքներից ազատված: «Համայն աշխարհը դառնա հայրենիք բոլոր ազգերի համար»⁵⁸: Սակայն, ցավոք, Հյուգոյի երազանքը չի իրականանում, մարդկությունը չարունակում է լողալ խավարի մեջ: Ահա հենց դրա համար էլ Իսահակյանը «Աբու-Լալա Մահարի» պոեմում ցնցող փաստերով ներկայացնում է, թե ինչպես է մարդը հեռացել աստվածային պատվիրաններից:

Պոեմի առանձին հատվածները բանաստեղծը կոչել է սուրահ՝ հետեւելով մահ-մեղականների սրբազան գրքի՝ Ղուրանի գլխաբաժանման ձևին: Օրինակ՝ սուրահ «Ալ Օսարայում» կարդում ենք. «Ոչ մի քաղաք կամ ավան չկա, որին չոչնչացնենք, նախքան օրը դատաստանի: Կամ եթե հանցագործ են, սոսկալի չար-չարանքի կենթարկենք, սա աստվածային գրքում պահպանված տախտակում գրանցված է»⁵⁹:

Տեսնենք, թե ինչու Աբու-Լալա Մահարին ատեց մարդուն, թողեց Բաղդադը և հեռացավ անապատ: Հայերեն բնագրին կցվում են նախերգանքի ուռևերեն և Փրանսերեն թարգմանությունները.

Աբու-Լալա Մահարին,
Հուշակալոր բանաստեղծը Բաղդադի,
Տասնյակ տարիներ ապրեց
Խալիֆաների հոյակապ քաղաքում,
Ապրեց փառքի և վայելքի մեջ,
Հզորների ու մեծատուների հետ սեղան նստեց,

⁵⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2007:

⁵⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 308:

⁵⁶ «Поэзия Армении». 1987, 506.

⁵⁷ Isaakian. 1952, 9.

⁵⁸ Isaakian. 1952, 9.

⁵⁹ Սուրբ Ղուրան. 2006, 582:

կային կեղծ փոխհարաբերությունները, կինը, ընկերը, հայրենիքը, հայրը: Բանաստեղծը չի հավատում անգամ կնոջ երդմանը, որովհետև նրա բերանով սատանան է խոսում:

Խաբխուռ մակույկով հանձնվիր ծովին,
քան թե հավատաա կնոջ երդումին⁶³:

Ընկերը նենգ ու դրուժան է, բարեկամդ լավիդ նախանձող, հայրենիքը միայն հարուստների համար է, մարդկային օրենքները լուծ ու խարազան են, բարի մարդիկ սակավ են:

Զոհվում է լավը վատերի համար,
և վատն ու չարը լլկում են, տանջում
Մի բուռ լավերին այս վատ աշխարհում,
և կյանքի արտում որոմն է աճում⁶⁴:

Խոցված կյանքի անարդարությունից՝ բանաստեղծն իր քարավանն ուղղում է դեպի արևը՝ նրան անվանելով մայրական սուրբ գիրկ: Պետք է կարծել, որ մարդկային արատներով այդքան լցված կյանքում բանաստեղծը տենչում է դեպի կյանք տվող արևը, որը Հիսուս Քրիստոսի առաջին խորհրդանիշն է:

1919–1937 թվականների ընթացքում է գրվել «Սասմա Մհեր» վիպերգը: Ա. Ղանալանյանը փաստում է, թե բանաստեղծի ձեռքի տակ են եղել «Սասունցի Դավիթ» էպոսի բազմաթիվ տպված ու ձեռագիր տարբերակներ, այդ թվում Բասենում իր կողմից գրի առնված «Փոքր Մհերի» պատմությունը⁶⁵: Բնականաբար, պոեմի հիմքում ընկած է «Սասունցի Դավիթ» վիպերգի չորրորդ՝ «Փոքր Մհեր» ճյուղը:

«Սասմա Մհերի» նախնական տարբերակը լույս է տեսել Վիեննայում 1922-ին: Հետագայում 1937 թվականին, այն վերամշակվել և գրվել է ժողովրդական էպոսից տարբեր՝ «Վերջերգ»: «Սասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» վիպերգի չորրորդ ճյուղն ավարտվում է Փոքր Մհերի՝ Ազուավաքարում փակվելու դրվագով և հայ ժողովրդի այն սպասումով, թե չար աշխարհը մի օր քանդվելու է, գալու են բարեկեցիկ օրեր ոչ միայն հայերի, այլ մարդկության համար:

Տեսնելով Խորհրդային Հայաստանի գիտական, տեխնիկական առաջընթացը՝ Իսահակյանը Փոքր Մհերին հանում է Ազուավաքարից, որովհետև.

Ավերեցին աշխարհը չար,
Ու ուժեղություն բերին աշխարհ
Ռամկի օրենք ու իրավունք,
Որ տեր դառնա ուժիկն իրեն
Սուրբ վաստակին, արդար հացին⁶⁶:

⁶³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 57:

⁶⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 70–71:

⁶⁵ Ղ ա ն ա լ ա ն յ ա ն. 1955, 55:

⁶⁶ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 109:

«Մասսա Մանուկ» պոեմն ամբողջությամբ չի տպագրվել խորհրդային տարիներին, այն լույս է տեսել հատվածաբար: Գրվել է 1895–1898 թթ., վերամշակվել է 1908-ին, սակայն վերջնական ձևով ավարտված չէ⁶⁷: Պոեմը լույս է տեսել Ավիկ Իսահակյանի ջանքերով՝ ՀՀ անկախության տարիներին⁶⁸:

«Մասսա Մանուկ» պոեմը չէր կարող ամբողջությամբ լույս տեսնել խորհրդային Հայաստանում, որովհետև նրա հիմքում ընկած էին Աբղուշ Համիդի կազմակերպած հայկական ջարդերը Արևմտյան Հայաստանում, որին անմեղորեն զոհ գնացին 300.000 հայեր: Այն հատվածաբար լույս տեսավ 1974-ին, երբ արդեն Ծիծեռնակաբերդում վեր խոյացավ 1915-ի ազգակործան ցեղասպանության հուշարձանը: Գաղափարական ուղղվածությամբ «Մասսա Մանուկը» աղբյուրներ ունի «Ուստա Կարո» վեպի հետ: Երկուսի մեջ էլ ցասումնալի բողոք է Արևմտահայաստանը ոչնչացրած թուրքական քաղաքականության դեմ, որի հետևանքով.

Շեն քաղաքներ ավեր առան,
Ավեր արին, կրակ տվին,
Մեր ու մանուկ սրի հանին,
Ծեր ու տղա հրի տվին,
Գյուղ ու ավան, հանդ-անդառտան,
Վանք ու դարբաս կողոպտեցին,
Հրի տվին, մոխիր արին,
Մոխիր արին, քամուն տվին ...⁶⁹

Սակայն ծնվում է Մասսա Մանուկը, որը պետք է վրեժխնդիր լիներ սուլթանից ու ազատագրեր Հայաստանը: Նա, ինչպես Սասունցի Դավիթը, արտասովոր մանուկ էր.

Ամեն մանուկ տարով կմեծնար,
Մեր մանուկը ժամով մեծացավ ...⁷⁰

Հայ ժողովուրդը իր ազատագրման հույսը կապում է Մասսա Մանուկի հետ:

Արձակը

Ավ. Իսահակյանը գրել է արձակ բանաստեղծություններ, լեզենդներ ու գրույցներ, հեքիաթներ, պատմվածքներ, առակներ և «Ուստա Կարո» վեպը: Բոլոր գործերում տեսնում ենք գրողի խոհերը կյանքի ու մահվան, սիրո և նրա առեղծվածների, մարդու ազնվության, Արևելքի ու Արևմուտքի մարդկանց հոգեբանության, փառքի ու արժանապատվության և ընդհանրապես մարդու մտավոր ու հոգևոր աշխարհը ներկայացնող երևույթների մասին:

«Երգի հրապույրը» արձակ բանաստեղծություն է, որով ապացուցվում է, թե ինչքան կարևոր է երգը մարդու կյանքում: Ինչ-որ առումով այս հրաշալի

⁶⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 311:

⁶⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2008:

⁶⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 118–119:

⁷⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1974, 122:

պատումը հիշեցնում է հունական դիցաբանություն մեջ եղած Օրփեոսի զրույցը, որի երգից անգամ չոր ծառը ծաղկում էր: Ահա Իսահակյանի պատանի հերոսը երգը նվիրում է մարդկանց. «Այդ օրվանից աշխարհ եկավ Երգը, ու երգի միջոցով հավեցին քար-սրտերը, և այդ օրվանից սերը վշտի հետ անբաժան բույն դրեց մարդկանց սրտերի մեջ ...»⁷¹:

Աշխարհահռչակ սիրո երգիչ, XIII դարի նշանավոր պարսիկ բանաստեղծին՝ Սաադիին է նվիրված «Սաադիի վերջին գարունը» արձակ բանաստեղծությունը: Դրանում քննվում են կյանքի ու մահվան, սիրո և հավերժության հարցերը: Անմոռաց են Սաադիին վերագրվող հետևյալ խոսքերը. «Ծնվում ենք ականամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով ...»⁷²:

Իսահակյանի փոքրածավալ արձակում մեծաքանակ են չինական, հրեական, մոնղոլական, վրացական, հնդկական ու այլ երկրների մասին պատմող զրույցները: Դրանցից մեկը նվիրված է մոնղոլ տիրակալ Ջինգիզ խանին, որը ստեղծեց աշխարհի ամենամեծ կայսրությունը, և ինչպես վկայում են գիտական աղբյուրները, երազում էր դառնալ նոր Ալեքսանդր Մակեդոնացի:

Մեծ մարդասեր Վարպետն ասում էր բոլոր բռնակալներին և ներկայացնում է, թե ինչպես մահվան առջև բոլորն անգոր են: Սակայն չարի ծնունդները նույնիսկ վերջին շունչը փչելուց առաջ մնում են իրենց դիվային չարությունը. «— Վեզի՛ր, հրամայում եմ իմ պետության բոլոր աղբյուրներն ու գետերը, ծովերն ու օվկիանոսները թունավորեցեք, որ ինձ հետ մեռնեն ամենքը, ամենքը ...»⁷³:

Իսահակյանի արձակի զարդերից է «Լիլիթը»: Ահա թե ինչ տեղեկություն է հաղորդում մեզ վաստակաշատ Իսահակյանագետ Արամ Ինճիկյանը այս ստեղծագործության սկզբնաղբյուրների մասին. «Իր այս երկը ստեղծելիս Իսահակյանը նկատի է ունեցել, — ինչպես վկայում են նրա արխիվում եղած գրառումները, — Թալմուդում, Հին ու Նոր կտակարանների պարականոն զրույցներում, ասորաբաբելական, սիրիական, արաբական, ինչպես նաև հայկական դիցաբանության մեջ պահպանված ավանդությունները Ադամի առաջին կնոջ՝ Լիլիթի մասին»⁷⁴:

Իրականում Լիլիթի կերպարը Վարպետին հնարավորություն է տվել ներկայացնելու տղամարդու՝ դեպի կինը ունեցած սիրո ուժը: Հայ միջնադարի մեծ սիրերգակ Կոստանդին Երզնկացին էլ տիեզերքի շարժիչ ուժ համարում էր սերը: Ադամն ասում է. «Եվ գիտեմ հիմա, որ սերն է բոլոր իրերի հոգին, սերն է, որ թռչունների բերանը հովերի ու աղբյուրների անուշ մրմունջն է դրել»⁷⁵: Լիլիթի կերպարը դարձել է առանձին վեպերի նյութ: Ռուս հեղինակ Ջինաիդա Գիպուսը իր «Լիլիթ» վեպում Ադամի առաջին կին Լիլիթին ներկայացնում է որպես այլմոլորակային, որը սատանայի հետ փախչում է տիեզերք:

Ամեն զգայուն տղամարդու կամ կնոջ համար կարող է լինել չիրականացած, երազային սեր, որի դրսևորումն է հավանաբար Լիլիթի կերպարը՝ այդքան տպավորիչ ձևով կերտված Վարպետի գրչով:

⁷¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 18:

⁷² Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 76:

⁷³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 134:

⁷⁴ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 466:

⁷⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 198:

Քաջատեղյակ լինելով աշխարհի քաղաքական տեղաշարժերին, ազգերի ազգային-ազատագրական պայքարին՝ Իսահակյանը գրեց «Գարիբալդիականը» պատմվածքը: Զուգեպես Գարիբալդին հայտնի է ողջ աշխարհում որպես Իտալիան ավստրոհունգարական լծից ազատագրող շարժման ղեկավար: Գարիբալդիի կերպարով Իսահակյանը պատգամ է հղում իր ազգին՝ ազատվել ցանկացած օտար տիրակալությունից: Նախկին գարիբալդիական ծեր գինյորն ապրում էր Օդեսայում, սակայն նրա սիրտը մշտապես իր հերոս հրամանատարի հետ էր: Նա ասում էր. «— Զուգեպես Գարիբալդի, Զուգեպես Գարիբալդի ... ահա՛ իմ փառքը, իմ անհափ հարստությունը, ահա՛ իմ բախտը, որով ապրում եմ շատերից երջանիկ»⁷⁶: Մեր գարիբալդիականը ցույց է տալիս իր սիրտն ու ասում, թե Գարիբալդին կենդանի ապրում է իր սրտում: Սա յուրօրինակ հայրենասիրական դաս է, որ Վարպետն ուղղում է հայ ընթերցողին՝ ուսուցանելով, թե ինչպես պետք է սիրել հայրենիքը:

Բազմազան թեմատիկա ունեցող պատմվածքներում աչքի է ընկնում «Համբերանքի չիբուխը», որը գրվել է 1928-ին Երևանում⁷⁷: Այն վերատիկ լիքն է ժողովրդական բանահյուսության հրաշալիքներով առած-ասացվածքներ, գրույցներ, փոխառյալական խոհեր:

Պատմվածքը պատմվում է որպես հուշագրություն: Օհան ամին՝ պատմվածքի գլխավոր հերոսը, իր մեջ կրում է հայ գյուղացու լավագույն գծերը: Նա աշխատասեր է, ընտանեակ. պատվով հողին է հանձնել ծնողներին, տուն ու տեղ ստեղծել, զավակներ ունի և կին: Սակայն անարդար մի միջադեպ, որը կապված է գյուղի հողաբաժանության հետ, պատճառ է դառնում մի քանի տղամարդկանց ըմբոստացման: Նրանք ծեծում են գյուղի ուսուցիչն ու մի քանի հարուստների և օրենքի առաջ պատասխան չտալու համար փախչում են սարերը՝ «ղաչաղ» դառնում⁷⁸: Ընկերները որոշ ժամանակ անց վերադառնում են գյուղ ու ներդրություն խնդրում: Օհան ամին ընկնում է բանտ, ազատվելուց հետո գյուղ չի վերադառնում, այլ գնում է ջրաղացում աշխատելու՝ հիստորիկալ աշխարհի անարդարությունից: Պատմվածքում կա այն ճշմարտությունը, թե շունն ավելի հավատարիմ է իր տիրոջը, քան բարեկամներն ու ընկերները: Բանտում Օհան ամին համոզվում է, որ մեծ գողերը բոլորովին էլ բանտում չեն, այլ ազատության մեջ են: Նա հասկանում է, որ մարդկային չարիքների պատճառը ազահույթյունն է, և այդ հաստատելու համար բերվում են կյանքից բերված հետաքրքիր դրվագներ: Օհան ամին ապրում է Աստվածաշնչի տասը պատվիրանների համեմատ. նա հալալ աշխատում է և իր արդար վաստակած հացը կիսում է ուրիշների հետ: Նրա կարծիքով մարդն իր արարքներով պետք է քաղցրացնի կյանքը՝ իր բարի գործերը ի ցույց չդնելով, ճիշտ այնպես, ինչպես չաքարը թեյը դարձնում է քաղցր, սակայն այն չի երևում: Նույնիսկ բացատրում է ծերացանք բառի իմաստը. «... ծերացանք, ըսել է՝ եկանք հասանք ծերին»⁷⁹:

Իսահակյանի պատմվածքներում առկա են պանդխտի հոգեբանությունը, հարուստի և աղքատի փոխհարաբերությունները, հայրենի հուշերը, ծառաների

⁷⁶ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 308:

⁷⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 485:

⁷⁸ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 17:

⁷⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 27:

ու տերերի փոխհարաբերությունները: Գրողի որոշ պատմվածքներում առանձին մտքեր նույնքան գործածական են դարձել հայ կյանքում, որքան նրա երգվող բանաստեղծությունները: «Ծառա Սիմոնը» պատմվածքի հերոսը ինքնակամ թողնում է քաղաքում հարուստի տանը ծառայելը և վերադառնում է գյուղ՝ այլևս ողջ օրն իր անունը չլսելու համար:

Սիմոն, արի,
Սիմոն, գնա,
Սիմոն, տար,
Սիմոն, վազե,
Սիմոն, թուիր ...⁸⁰

Ի դեպ, Իսահակյանի բանաստեղծությունների լայն ժողովրդականությունը մասին հուշեր ունի Արամ Ինճիկյանը՝ գրառված Մարտիրոս Սարյանի տանը: Երիտասարդ մի նկարիչ Վարպետին հարցնում է, թե արդյոք հասարակ մարդիկ չփոթո՞ւմ են նրա գրածը ժողովրդականի հետ: Նա պատմում է հետևյալը. «Վա-յոց ձորում 1903 թվականին մի մաճկալ երգում է «Որսկան ախպերը»: Վարպետը մոտենում է և բարեկեց հետո հարցնում:

– Գիտե՞ս էդ ում երգն է:

– Ո՞ւմը:

– Էդ իմ հորինածն է:

Մաճկալը ոտքից գլուխ չափեց ինձ:

– Ծամփեղ գնա՛, ճամփեղ ... Էդ մերն է, մեր երգն է ...»⁸¹:

... Վարպետի երկրորդ գլուխգործոցը «Ուստա Կարո» անավարտ վեպն է, որը XX դարի 20-ական թվականներին սկսել է տպագրվել Բոստոնում լույս տեսնող «Հայրենիք» ամսագրի մայիս ամսվա թիվ 7 համարում՝ «Ուստա Կարո» անտիպ վեպից (մի հատված «Բագրանի ուխտը» գլխից) խորագրով⁸²:

Հատկապես իր տարբեր նամակներում Վարպետը հատուկ խանդավառությամբ գրում է, թե աշխատում է «Ուստա Կարո» վեպի վրա: Վեպը մեզ հասած անավարտ ամբողջության մեջ առաջին անգամ տպագրվել է 2006-ին՝ Ավիկ Իսահակյանի նախաձեռնությամբ, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի հովանավորությամբ: Հրաչյաի հրատարակություն է՝ զարդարված Մարտիրոս Սարյանի՝ Հայաստանի գունագեղ բնանկարներով: Գրքի գլխավոր խմբագիրն է Ավագ Խաչատրյանը, ծավալուն առաջաբանի հեղինակը՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյանը: Վերջինիս առաջաբանը վեպի մեկնաբանման շատ ճշգրիտ դրսևորում է և հիմնավորում է, թե ինչու է այն մնացել անավարտ՝ չնայած շարադրվել սկսել է 1910 թվականին: Սարինյանի կարծիքով «Ուստա Կարոն» ստեղծագործական ազդակ ունի իր հիմքում՝ Ֆլամանդական էպոսը՝ «Թիլ Ուլենշպիգելը»: Իսահակյանը քաջածանոթ էր աշխարհի էպոսներին՝ այդ թվում բելգիացի գրող Շառլ դը Կոստերի «Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի արկածները ...» վեպին, որը 1948-ին լույս է տեսել հայերեն թարգմանությամբ՝ Ավ.

⁸⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1975, 58:

⁸¹ Ի ն ճ ի կ յ ա ն. 1977, 256:

⁸² «Հայրենիք» (Բոստոն), 1924, № 7, 2–9:

Իսահակյանի առաջաբանով: Վարպետը գրում է. «Թիլը դառնում է ժողովրդի ազատության ձգտումների և ոգորումների մարմնացումը»⁸³: Նրան ծանոթ է Ֆրանսերեն հրատարակության համար Ռոմեն Ռոլանի գրած առաջաբանը: Առաջաբանում շեշտվում է Ուլենշպիգելի ազատատենչությունը, որն իր դրոշի վրա գրել էր՝ «Ապրել ընդմիջտ լույսի մեջ»⁸⁴:

Ուստա Կարոն կենսասեր, աշխատասեր, բազմաշնորհ, առատաձեռն, կատակասեր տղամարդ էր, որն անտարբեր չէ գեղեցիկ կանանց նկատմամբ և ուներ իր սիրելի էակը: Սակայն Ուստա Կարոյի հիմնական ու դժվար լուծելի խնդիրը Արևմտահայաստանի ազատագրումն էր: Միֆոլոգիայի տարրերով հագեցած «Ուստա Կարո» վեպում Վարպետը փորձում է լուծել դժվարին քաղաքական խնդիրներ. նա շեշտում է, թե «վեպն ընդգծելու է մեր ողջ կյանքը, բոլոր դասերը, մտքերը, հոսանքները, էպոսը ...»⁸⁵: Իսահակյանը մարգարեաբար տեսնում էր մեծ տերությունների խոր անտարբերությունը դեպի Հայկական հարցը: Սարինյանը մեջբերում է 1954-ին գրված Վարպետի գուշակությունը, որում ասվում է, թե հայ ժողովուրդը ապագա չունի, չկան Կարսը, Սուրմալուն, Կադզվանը, Ղարաբաղը մեռնում է, Ախալքալաքը նույնպես, Նախիջևանը դատարկվել է հայերից: Վրաստանի, Ադրբեջանի հայությունը այլասերվում է, Ռուսաստանի հայությունը ձուլվում: Հայաստանի հայությունը փախչում է երկրից, Սևանը մեռցնում են, «և ընդհանրապես չկա ոգի, հայկական, ազգային ոգի»⁸⁶:

«Ուստա Կարո» վեպը երկրորդ տարբերակով լույս տեսավ Վարպետի «Երկերի լիակատար ժողովածուի» ակադեմիական VIII հատորում՝ «Ուստա Կարո և Օրթե Հարություն» խորագրով: Բնագրերը հրատարակության են պատրաստել Գուրգեն Գասպարյանը և Լաուրա Վիրաբյանը, առաջաբանի ու ծանոթագրությունների հեղինակը Գուրգեն Գասպարյանն է:

Վարպետի հետաքրքրությունների լայն շրջանակը ու նրա գործերին տրված գնահատականները

Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ լույս են տեսել բազմաթիվ գրքեր՝ հատկապես հայերեն և ռուսերեն: Նրա ստեղծագործությունը ըստ արժանիության բարձր են գնահատել Հովհաննես Թումանյանը, Վահան Տերյանը, Նիկոլ Աղբալյանը, Մարիետա Շահինյանը, Իլյա Էրենբուրգը, Ալեքսանդր Փաղեկը: Տեղին է հիշել Ի. Էրենբուրգի՝ Վարպետին տրված գնահատականներից մեկը. «Բանաստեղծ Իսահակյանը պատկանում է բանաստեղծների այն շարքին, որոնք ծնվում են հազվադեպ: Նրանով կարող է հպարտանալ ցանկացած, նույնիսկ ամենահարուստ գրականությունը: Շատ տասնամյակների ընթացքում նրա գրականությունը օգնել է ինձ ապրել: Ես համոզված եմ, որ այն կենդանի կմնա դարեր ու դարեր»⁸⁷:

⁸³ Դ ր Կ ո ս տ ե ր. 1987, 6:

⁸⁴ De Coster. 1979, 22.

⁸⁵ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2006, 34:

⁸⁶ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2006, 36:

⁸⁷ Аветик Исаакян в русской критике. 1961, 123.

Իսահակյանի ժառանգության մեջ ճանաչողական մեծ արժեք ունեն նամակները, որոնք գրվել են նրա հատորներում և հրատարակվել են նաև առանձին գրքով⁸⁸:

Անգուգական են Վարպետի հուշերը Հովհաննես Թումանյանի մասին: Նա եզակի հուշեր ունի Ղևոնդ Ալիշանի, Խրիմյան Հայրիկի, Պերճ Պոռչյանի, Մուրացանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Կոմիտասի, Թորոս Թորամանյանի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Լեոյի, Գևորգ Բաշինջաղյանի, Վահան Տերյանի, Հակոբ Հակոբյանի, Շուշանիկ Կուրդլինյանի և Մարտիրոս Սարյանի մասին: Վարպետը հանճարեղ Սարյանին նվիրված հոդվածը իրավացիորեն խորագրել է՝ «Սարյանն ամբողջ աշխարհինն է»⁸⁹:

Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը Իսահակյանի կարծիքով եզակի է համաշխարհային գրականության մեջ⁹⁰: Իսկ որքան ճշգրիտ է բնութագրել Խաչատուր Աբովյանին ու նրա վեպը. «Զարմանալի, անհունորեն զարմանալի հրաշք-երևույթ է «Վերք Հայաստանին»⁹¹:

Ա. Իսահակյանը 1943 թ. Հայաստանում հիմնադրված Գիտությունների ակադեմիայի հիմնադիր անդամներից էր: Իր ողջունի խոսքում նա ասել է. «Եվ վերջապես, Հայկական ակադեմիայի կուլտուր-պատմական մեծ գործերից առաջնակարգն է՝ բարձրացնել հայ ժողովրդի ինքնաճանաչողությունը, խորացնել հայրենասիրությունը, գիտակցական սեր զարգացնել նրա մեջ դեպի հայրենիքը, լեզուն, կուլտուրան և հավատ դեպի իր պայծառ ապագան: Ակադեմիան պիտի հանդիսանա մեր ժողովրդի պարծանքն ու հպարտությունը: Նա պիտի լինի մեր կուլտուրայի գագաթը»⁹²:

«Մտքեր հայ գրականության մասին» հոդվածում Վարպետը հիշատակում է միջնադարյան մեծաքանակ հայ գրականության մասին, որից 22 հազարից ավելի օրինակներ են միայն հասել մեր օրերը, և դրանք ունեն միջազգային արժեք հատկապես Մերձավոր Արևելքի պատմությունն ուսումնասիրելիս⁹³:

Երկար տարիներ հարյուրից ավելի մենագրություններ են գրվել Իսահակյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ: Գրվել են նաև հազարավոր հոդվածներ՝ տարբեր լեզուներով: Կան գրականագետներ, որոնք Վարպետին նվիրել են մի քանի մենագրություններ: Դրանք են՝ Արամ Ինճիկյան, Հովհաննես Ղանալանյան, Գարիկ Հովհաննիսյան, Գուրգեն Հովնան, Կամսար Գրիգորյան, Հրանտ Թամրազյան, Ավագ Խաչատրյան և շատ ուրիշներ: Անվանի լեզվաբան Վարազ Առաքելյանը կարևոր գիրք է գրել Վարպետի պոեզիայի ոճի և բառապաշարի առանձնահատկությունների մասին⁹⁴: Վարպետի ստեղծագործությունը նվիրված են շուրջ 100 մենագրություններ, ժողովածուներ և հազարավոր հոդվածներ:

⁸⁸ Ավետիք Իսահակյանի նամակները. 2015:

⁸⁹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 126:

⁹⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 125:

⁹¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 177:

⁹² Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 372–373:

⁹³ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 191:

⁹⁴ Առ ա ք է լ յ ա ն. 1954, 259:

Իսահակյանի ստեղծագործության դպրոցական ուսուցմանը նվիրվել է հատուկ մեթոդական ձեռնարկ⁹⁵։ Ռուսերեն ու հայերեն հրատարակվել է «Аветик Исаакян в музыке» ուղեցույց կարևոր գիրքը, որից իմացվում է, թե որքան մեծ քանակի գործեր վերածվել են գեղեցիկ երգերի, որոնք սիրված են, երգվում են ու կերգվեն⁹⁶։

Ավ. Իսահակյանը կատարել է մեծաքանակ թարգմանություններ։ Նա խոստովանել է, թե կատարյալ թարգմանություններ կատարել է գերմաներենից, ֆրանսերենից և ռուսերենից։ Թարգմանություններ է կատարել Իբսենից, Նիցշեից⁹⁷։ Վարպետը թարգմանել է Արթուր Շնիցլերի, Կնուտ Համսունի, Ակակի Ծերեթելիի, Իոսեֆ Գրիչաշվիլիի, Հաֆեզի, Մաքսիմ Դիլսկու, Միխայիլ Լերմոնտովի և այլ գրողների գործեր⁹⁸։

Մի քանի գրքեր նվիրված են Իսահակյանի ստեղծագործության առանձին խնդիրներին։ Ակադեմիկոս Լևոն Հախվերդյանը 1990 թ. հրատարակած գրքում հետմահու յուրօրինակ գիտական երկխոսություն է վարում բանաստեղծի հետ՝ բացահայտելով հանճարեղ մտածողի մտավոր աշխարհը⁹⁹։ Գրականագետներ Ավիկ Իսահակյանը և Լևոն Մկրտչյանը հատուկ մենագրություններ են նվիրել Իսահակյանի ու ռուս գրականության կապերին¹⁰⁰։ Գևորգ Աբաջյանն ուշագրավ գիրք է գրել 2001-ին «Ավետիք Իսահակյանը և Հայոց ողբերգությունը» խորագրով։ Պոֆեսորներ Վաչե Պարտիզունին, Ազատ Եղիազարյանը արժեքավոր գրքեր են նվիրել Ավետիք Իսահակյանի ու Վահան Տերյանի, Վարպետի և Հովհաննես Թումանյանի գրական կապերին՝ հարստացնելով նաև տեղյանագիտությունն ու թուամանյանագիտությունը։

Երևանի Ավ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնում տեղի ունեցած հոբելյանական 80-ամյակի հանդիսության ժամանակ Վարպետը, ելնելով իր կենսափորձից, հայ ժողովրդին պատգամել է. «Ես կցանկանայի, որ հայ ժողովուրդը լիներ ինքնավատահ, բարձր պահեր ազգային արժանապատվությունը։

Կցանկանայի, որ նա մայրենի լեզվի պաշտամունքն ունենար։ Ավելի գիտակից կառուցեր հայրենի հողին։

Կցանկանայի, որ նա խնամքով պահեր իր հինավուրց կուլտուրայի կոթողները և դրանցով հպարտանար։

Կցանկանայի, որ մեր արվեստն ու գրականությունը ազգային կոլորիտի և ձևերի միջով արտահայտեին համամարդկային զգացմունքներ և մտքեր, կերտեին արժեքավոր գործեր և կերպարներ»։

⁹⁵ Դ ա վ թ յ ա ն. 2008:

⁹⁶ Аветик Исаакян в музыке. 2006.

⁹⁷ Ի ս ա հ ա կ յ ա ն. 2000, 273:

⁹⁸ Խ ա չ ա տ ը յ ա ն. 1986, 211–212:

⁹⁹ Հ ա խ վ ե ը դ յ ա ն. 1990:

¹⁰⁰ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1984, Мкртчян. 1953.

Հանճարին հատուկ խմաստուն խոսքում Վարպետն ասում է. «Իհարկե, մարդ չպիտի մտածե աշխարհից բան տանելու մասին, այլ աշխարհում բան թողնելու մասին: Մնացածը ունայնություն է»¹⁰¹:

Պաշտելի Վարպետը թողել է գրական այնպիսի ժառանգություն, որն անմահ է և հավերժության է տանում հայ ժողովրդին:

Եզրակացություն

Ավետիք Իսահակյանը վաղ հասակից աչքի է ընկել արտակարգ ընդունակություններով և բացառիկ ուսումնաստենչությամբ: Գրեթե պատանի նա մեկնել է Եվրոպա՝ նախապես իր մեջ ամբարելով կարևոր գիտելիքներ հայ ժողովրդի դարավոր պատմության և անցյալի հարուստ գրականության վերաբերյալ: Հանճարին հատուկ հետաքրքրությամբ ուսումնասիրել է համաշխարհային պատմությունն ու գրականությունը՝ Արևելքն ու Արևմուտքը: Ստեղծագործել սկսել է վաղ հասակից՝ լայնորեն օգտագործելով ուրիշ ազգերի բանահյուսությունը և հատկապես վիպերգերը:

Ավ. Իսահակյանի գրականությունը ներծծված է ազգասիրության ու մարդասիրության գաղափարներով: Հատկապես «Ուստա Կարո» անավարտ վեպով կամեցել է ուղենշել Հայկական հարցի լուծումը, հայկական պատմական տարածքների վերադարձը:

Նրա ստեղծագործությունն ունի թեմատիկ բազմազանություն և ասելիքն անպայման համամարդկային արժեք է: Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմը վերժամանակյա է, համամարդկային: Այդ պատճառով էլ թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով՝ հենց տպագրվելուց անմիջապես հետո:

Հայ և համաշխարհային գրականության դասականներին տրված Վարպետի մեկնաբանությունները ելակետային են գրականագետների համար: Իսահակյանի խոսքը դարերի համար է և օգնում է մարդուն սթափ նայել կյանքին ու գնալ իսկական արժեքների հետևից: Վարպետի ստեղծագործությունը հաճախ մարգարեություն է, իրողություն, որ հատուկ է հանճարներին:

Աելիտա Դոլուխանյան – բ. գ. դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ հին ու միջնադարյան հայ գրականություն, բանահյուսություն, ժամանակակից հայ գրականություն, գրականության դասավանդման մեթոդիկա, գրաքննադատություն, հայագիտություն, գրական կապեր: Հեղինակ է 39 գրքի և շուրջ 800 հոդվածի: ORCID: 0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com

¹⁰¹ Ի ս ա հ ա կ յ ա ն. 1977, 293:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքելյան Վ. 1954, Ավետիք Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ոճական առանձնահատկությունները, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 259 էջ:

Ավետիք Իսահակյանի նամակները. 2015, Երևան, ԵՊՀ հրատ., 473 էջ:

Գրիգոր Նարեկացի. 2011, Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Ժ դար, Երևան, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամ, «Մատենադարան» հրատ., 1120 էջ:

Դավթյան Ս. 2008, Դրվագներ Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունները դպրոցում ուսուցանելու մեթոդիկայից (մեթոդական աշխատանք), Երևան, «Լուսակն» հրատ., 70 էջ:

Դը Կոստեր Շառլ. 1987, Ուլենշպիգելի և Լամմե Գուդգակի լեզենդը, նրանց հերոսական զվարճալի ու պանծալի արկածները Ֆլամանդիայի երկրում և այլուր, ֆրանսերենից թարգմանեց Վահե Միքայելյանը, խմբագրությամբ և առաջաբանով ակադեմիկոս Ավ. Իսահակյանի, Երևան, «Լույս» հրատ., 464 էջ:

Դոլուխանյան Ա. 2022, Մորուս Հասրաթյան, Ինքնության և ժառանգության վավերագիրը, Երևան, «Numag» հրատ., 206 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում. 2009, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 998 էջ:

Ինձիկյան Ա. 1977, Ավետիք Իսահակյան, Երևան, «Սովետական գրող» հրատ., 257 էջ:

Իսահակյան Ավ. 1939, Ընտիր երկեր, հ. I, Բանաստեղծություններ, Թարգմանություններ, Առաջաբան Խ. Սարգսյանի, Երևան, ՀԽՍՀ պետական հրատ., 318 էջ:

Իսահակյան Ավ. Երկերի ժողովածու վեց հատորով, 1973, հ. I, 463 էջ, 1974, հ. II, 335 էջ, 1975, հ. III, 480 էջ, 1975, հ. IV, 493 էջ, 1977, հ. V, 435 էջ, Երևան, «Հայաստան» հրատ.:

Իսահակյան Ավ. 2000, Ավետիք Իսահակյան: Գիտական կենսագրություն, գիրք առաջին, 1875–1900, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 602 էջ:

Իսահակյան Ավ. 2006, Ուստա Կարո, Տեքստը կազմողները՝ Ավիկ Իսահակյան և Անահիտ Վարդանյան, գլխավոր խմբագիր՝ Ավագ Խաչատրյան, առաջաբանի հեղինակ՝ Սերգեյ Սարինյան, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 575 էջ:

Իսահակյան Ավ. 2007, Ավետիք Իսահակյանի պոեմները, Երևան, «Վարպետ» հրատ., 239 էջ:

Իսահակյան Ավ. 2008, Բարև, Վարպետ: Գիտական ուսումնասիրությունների և հոդվածների ժողովածու, Երևան, «Ծիծեռնակ» հրատ., 840 էջ:

Իսահակյան Ավիկ. 1984, Ավետիք Իսահակյանը և ռուս գրականությունը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 475 էջ:

Իսահակյան Վ. 2000, Հայրս, Տեքստը պատրաստեց, խմբագրեց և առաջաբանը գրեց Ավիկ Իսահակյանը, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 590 էջ:

Իսահակյան Վ. 2006, Փարիզ. Քոչար. անցած օրեր ..., Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 331 էջ:

Խաչատրյան Հ. 1986, Գրական տեղեկատու, 1934–1986, Երևան, «Սովետական գրող», 622 էջ:

Ծննդոց. 3, 24:

Հախվերդյան Լ. 1990, Վարպետը, Երևան, «Արևիկ» հրատ., 207 էջ:

Հայ նոր գրականության պատմություն. 1979, հ. V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1012 էջ:

«Հայրենիք» (Բոստոն), 1924, թիվ 7, 144 էջ:

Ղանալանյան Ա. Տ. 1955, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 103 էջ:

Սայաթ-Նովա. 1963, Հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն խաղերի ժողովածու, Կազմեց, խմբագրեց և ծանոթագրեց Մորուս Հասրաթյան, Երևան, «Հայպետհրատ», 347 էջ:

Սուրբ Ղուրան. 2006, Պարսկերենից թարգմանեց և ծանոթագրեց Էդուարդ Հախվերդյանը, Երևան, «Հայաստան» հրատ., 1223 էջ:

Аветик Исаакян в музыке. 2006. Ереван, изд. Дом-музей Аветика Исаакяна, 179 с.

Аветик Исаакян в русской критике. 1961, Статьи, высказывания, письма. Ереван, Арм. госиздат, 175 с.

Мкртчян Л. 1953, Исаакян и русская литература. Ереван, Армянское государственное издательство, 243 с.

Поэзия Армении с древнейших времен до наших дней. 1987, под редакцией, со вступительным очерком и примечаниями Валерия Брюсова. Ереван, изд. «Советакан грох», 523 с.

Учебное пособие для студентов фил. специальности ун-ов и пед. ин-ов. 1976. М., изд. «Высшая школа», 795 с.

Issaakian Av. 1952, Abou-Lala Mahari, Traduit de l'armenien par Jean Minasian. Paris, Illustration de Shart, éd. de L'Union d'entraide Franco-Armenienne, 34 p.

Charles De Coster. 1979, La Légende d'Ulenspiegel. Ed. M., Progrès, 701 p.

ТВОРЧЕСТВО АВЕТИКА ИСААКЯНА НА ВЕКА

АЭЛИТА ДОЛУХАНИЯН

Резюме

Ключевые слова: Исаакян, Варпет (Мастер), многожанровый, «Абу-Лала Маари», «Уста Каро», баллады, фольклор, Армянский вопрос, юбилей.

С ранних лет именитый армянский поэт Аветик Исаакян (1875–1957) отличался незаурядными способностями и исключительной тягой к знаниям. Будучи почти юношей и накопив важные знания о многовековой истории армянского народа и литературе прошлого, он отправился в Европу. Со свойственной гению требовательностью он изучал всемирную историю и литературу – Восток и Запад.

Творческие способности Исаакяна проявились ещё в раннем возрасте, при этом он широко использовал фольклор других народов и особенно их эпосы. Его поэзия проникнута идеями любви к национальным корням и гу-

манизма. В частности, своим незавершённым романом «Уста Каро» Исаакян хотел наметить пути решения Армянского вопроса и возвращения исторических армянских территорий.

Творчество писателя отличается тематическим разнообразием и в содержательном плане являет собой общечеловеческую ценность. Поэма Ав. Исаакяна «Абу-Лала Маари» имеет вневременную и общечеловеческую значимость, в силу чего она была переведена на многие языки мира сразу после публикации.

Слово Варпета о классике армянской и мировой литературы явилось отправной точкой для литературоведов. Поэтические раздумья Исаакяна обращены в века и помогают человеку здраво смотреть на жизнь и следовать истинным ценностям. Его творчество часто является пророчеством, что свойственно гениям.

Аэлита Долуханян – д. филол. н., профессор, член корреспондент НАН РА, зав. кафедрой древнеармянской и средневековой армянской литературы и методики ее преподавания АГПУ им. Х. Абовяна. Научные интересы: древнеармянская и средневековая армянская литература, устное народное творчество, современная армянская литература, методика преподавания литературы, литературная критика, арменоведение, литературные связи. Автор 39 книг и более 800 статей. ORCID:0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com

AVETIK ISAHAKYAN'S ART IS ADDRESSED TO HUMANITY FOR AGES TO COME

AELITA DOLUKHANYAN

S u m m a r y

Keywords: Isahakyan, Varpet (Master), multi-genre, "Abou-Lala Mahari", "Usta Karo," ballads, folklore, the Armenian Question, jubilee.

From early ages, a famous Armenian poet Avetik Isahakyan (1875–1957) was distinguished by his extraordinary abilities and exceptional desire for knowledge. Being almost a young man, having acquired important knowledge about the centuries-old history of the Armenian people and its literature of the past, he traveled to Europe. With an exactitude characteristic of a genius, he studied world history and literature – East and West.

Isahakyan's creative abilities were manifested in his early youth; moreover, he widely used the folklore of the other nations and especially their epics. His poetry is imbued with the ideas of love for national roots and humanism. Notably, with his unfinished novel "Usta Karo," Isahakyan intended to outline the ways of solving the Armenian Question and returning the historical Armenian territories.

The writer's art is characterized by thematic diversity and, in terms of content, it represents a universal value. Av. Isahakyan's poem "Abu-Lala al-Ma'arri" has a timeless and universal significance, due to which it was translated into many languages immediately after its publication.

Varpet's opinion on the classical Armenian and world literature was a starting point for literary critics. Isahakyan's poetic thoughts are addressed to the ages and help a person look at life wisely and follow true values. Isahakyan's art is often a prophecy, which is characteristic of true geniuses.

Aelita Dolukhanyan – Doctor of Sciences in Philology, Professor, Correspondent Member of NAS RA, Chair of the Department of Ancient and Medieval Armenian Literature and its Teaching Methodology at the ASPU after Kh. Abovyan. Scientific interests: Ancient and Medieval Armenian literature, folklore, contemporary Armenian literature, methodology of teaching literature, literary criticism, Armenology, literary ties. Author of 39 books and over 800 articles.

ORCID: 0000-0001-9526-9464. aelita.dolukhanyan@gmail.com